

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Պօղոսին հրաշալի ճամբորդութիւնները



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1


Canada

©2021 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.


1

Պօղոս եւ Շիլա, Յիսուսի
ծառաները, բանտն էին:
Ո՛չ, անոնք յանցանք
չէին գործած, միայն
սատանայ մը հանած էին
կնկայ մը մեջէն: Անոնք
ցոյց տուին հեթանոս
կուռք պաշտող ժողովուրդին,
որ Եփեսոս
կ'ապրէր,
իրաւ
Աստուծոյ
եւ Իր Որդիին
Յիսուսի ուժը:




2

Այդ պատճառով
անոնք
ձերբակալուեցան,
ծեծուեցան եւ
բանտարկուեցան:




3

Թերեւս կը
կարծես, որ Պօղոս
եւ Շիլա զայրացած
եւ բարկացած
էին: Սակայն ոչ:
Այլ հակառակը,
կէս գիշերին
անոնք նստան եւ
փառաբանականներ
երգեցին Աստուծոյ:




4

Մնացեալ
բանտարկեալներն
ալ իրենց
ունկնդրեցին:



5

Յանկարծ, երգելը կանգ առաւ: Աստուած
երկրաշարժ մը դրկեց, որ բանտը շարժէ: Ամէն
դռները բացուեցան բոլորին շղթաները թուլացան:




6

Օ'հ, օ'հ: Բանտի
պտասխանատուն
վստահ էր, որ բոլոր
բանտարկեալները
փախած են:
Նոյնիսկ եթէ մէկ
հոգի փախած ըլլար
իւրը մահապատիժի
պիտի ենթարկուէր:
Դժբախտաբար, ան
դուրս հանեց իր
սուրը: Ան կրնար
ինքզինք սպաննել
այս եղածին
համար:



7

Բայց Պօղոս կանչեց.
"Վնաս մի հասցներ
դուն քեզի, որովհետեւ
մենք հոս ենք": Երբ
ան իրենց տեսաւ
ըսաւ. "Պարոններ,
ի՞նչ պետք է ընեմ
որ ազատիմ":




8

Ուրեմն ըսին. "Յաւատայ Տիրոջ Յիսուս Քրիստոսի, եւ դուն պիտի փրկուիս, դուն եւ քու տունդ": Բարեփախտաբար, բանտի պատասխանտուն հեռացաւ:




9

Յաջորդ օրը Պօղոս եւ Շիլա ազատ արձակուեցան եւ տարբեր քաղաքներ ճամբորդեցին, Յիսուսին մասին պատմելով ժողովուրդին: Շատեր հաւատացին, ուրիշներ փորձեցին վնաս հասցնել իրենց: Սակայն Աստուած իր ծառաներուն հետն էր:




10

Գիշեր մը, Պօղոս ժամերով քարոզեց: Երիտասարդ մը, որ բաց պատուհանին առջեւ կը նստեր խոր քունի մէջ մտաւ: Կրնաս գիտնալ ինչ եղաւ:



11


Ամէն մարդ գիտեր, որ երիտասարդը մեռաւ: Սակայն Պօղոս գնաց եւ փաթառուեցաւ անոր եւ ըսաւ. "Իր կեանքը իր մէջն է": Անոնք երիտասարդը ողջ ներս բերին եւ շատ ուրախ էին:



12


Պօղոս եւ Շիլա շատ մը արկածներ ունեցան իրենց ճամբորդութեան ընթացքին դէպի Եւրոպա: Պօղոս մեծ արկածներէն մէկը տեղի ունեցաւ նաւուն վրայ: Այն ատեն պողպատեայ հսկայ նաւեր չկային, այլ արագաստանաւեր, որոնք դիւրութեամբ

կը ջախջախուէին փոթորկոտ օդին:




13

Պօղոս նաւուն վրայ էր, որովհետեւ անգամ մը եւս ձերբակալուած էր: Այս անգամ ան Զոռմի կայսրին առջեւ պիտի բերուէր: Զոռմ այդ ժամանակի աշխարհի մայրաքաղաքն էր:




14



Չօրաւոր փոթորիկներ սաւը դանդաղեցուցին, կարծես սոսկալի փոթորկոտ օր մը կը սպասէր: Շատ դժուար պտոյտ մըն էր Պօղոսի եւ մնացեալ բանտարկեալներու՝ ինչպէս նաեւ նաւաստիներուն:


15

"Մարդիկ, ես կը տեսնեմ, որ այս ճամբորդութիւնը փորձանքով պիտի աւարտի", զգուշացուց Պօղոսի: Նաւուն հրամանատարը կարեւորութիւն չտուաւ անոր խօսքին:




16

Եւ դէպի ծով ուղղուեցաւ: Երբ հսկայ փոթորիկ մը անոնց գարնուեցաւ, անոնք պարաններով փաթեցին նաւը յուսալով, որ չի կտորի: Եթէ նաւը կտորեր բլորիկն համար ալ ջուրը գերեզման պիտի ըլլար:




17

Նաւը ծանրացած էր եւ նաւուն հրամանատարը հրամայեց բլորը, որպէսզի թէթեւցնեն նաւը: Երրորդ օրը անոնք ամեն ինչ նաւուն մէջէն ծով նետած էին: Թերեւս այդ կ'օգնէր:



18

Այդ գիշեր, հրեշտակ մը կեցաւ Պօղոսին քով ըսելով, որ ամեն ինչ լաւ պիտի ըլլայ: Բլորը քաջալերուեցան, երբ Պօղոս ըսաւ. "Միտ առէք մարդիկ, որովհետեւ ես կը հաւատամ, որ Աստուած ամեն ինչ լաւ պիտի ընէ ինչպէս որ ինծի ըսաւ: Եւ մենք մօտ կղզիի մը վրայ պետք է կանգ առնենք:"




19

Քանի մը օր ետք, նաւը Մալթա կղզիին մօտ կանգ առաւ: Նաւը գարնուեցաւ ժայռերուն եւ չափաչափուեցաւ: Նաւուն հրամանատարը հրամայեց, որպէսզի լողալ գիտցողները նետուին եւ լողալով ցամաք երթան: Մնացեալը նաւուն կտորածներուն վրայ նաւարկելով ցամաք հասան:




20

Մալթայի մէջ, Աստուած իր ուժը ցոյց տուաւ: Երբ անոնք տախտակ կը հաւաքէին կրակի համար, իժ մը խայթեց Պօղոսին: Ժողովուրդը կարծեց, որ ան պիտի մեռնի:



21

Բայց իժին խայթոցը անոր վնաս չհասցուց: Ժողովուրդը կարծեց, որ Պօղոս Աստուած է: Շատ մը հիւանդ մարդիկ քովը եկան, եւ Աստուած առողջացուց անոնց Պօղոսի աղօթքէն ետք:



22

Վերջապէս, Պօղոս Զոմ հասաւ: Երկու տարի առաւ, որ իր դատական հարցը կարգի դրուի: Այդ ժամանակի ընթացքին Պօղոս տուն մը վարձեց, ուր հիւրեր ընդունեց: Գիտե՞ս, թէ ինչ կը պատմէր Պօղոս իր այցելուներուն:

Աստուծոյ արքայութիւնը: Տէր Յիսուս Քրիստոս, ինչպէս իր բոլոր ճամբորդութիւններուն մէջ:



23

"Ես լաւ կռիւն կռուեցայ, ես մրցումը վերջացուցի, ես իմ հաւատքս պահեցի", գրեց Պօղոս Զոմէն: Սուրբ գիրքը մեզի կը պատմէր ինչպէս անոր կեանքը վերջ գտաւ, բայց ուրիշ յուշեր կ'ըսեն, թէ Պօղոս գլխատուեցաւ Զոմի մէջ, Ներոն կայսրին հրամանով: Պօղոս մահացաւ ապրած ըլլալով հաւատարիմ ծառան Աստուծոյ, եւ բոլորին պատմելով Յիսուս Քրիստոսի մասին:



24

Պօղոսին հրաշալի ճամբորդութիւնները


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 16, 27, 28

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

25



59

60 26

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16